Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ. ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԽՈՍՔԸ ԳՐՈՂՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ 85-ԱՄՅԱԿԻ ԱՌԻԹՈՎ

(5 դեկտեմբերի, 2019 թ.)

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից ողջունում եւ Հայրապետական Մեր օրհնությունն ենք բերում Հայաստանի գրողների միության 85-ամյակին նվիրված տոնական հանդիսության մասնակիցներիդ։

Հսկայական է գրականության դերը հասարակական եւ ազգային մեր կյանքում։ Իբրեւ խոսքի մշակույթ՝ այն մտածողություն է կերտում, ձեւավորում հայացք կյանքի եւ աշխարհի նկատմամբ։ Մեր գրականությունը դարեր շարունակ արտացոլել է հայ ժողովրդի կյանքն ու ձգտումները, հաղթանակներն ու տառապանքները, հաճախ նաեւ՝ որոնումներն ու վայրիվերումները։ Այն կրթել է մեր ժողովրդի հոգին ու միտքը, եղել նրա ինքնության նախանձախնդիր պահապանը, ներգործուն ուժականությամբ միավորել աշխարհասփյուռ մեր ժողովրդին ազատ ու անկախ հայրենիքի, հայոց բարօր կյանքի տեսլականի շուրջ։ Գրականությունը յուրօրինակ դարբնոց է. գրողն իր անդուլ աշխատանքով արծարծում է ներկայի իրողությունները, կռում ազգի ամուր եւ անխզելի կապը անցյալի եւ ապագայի հետ, անջնջելիորեն դրվագում նրա արժեքները, նշմարում եւ հավերժացնում հերոսականն ու անանցը։ Արդարեւ, մարդկային կյանքը միշտ կարիքն ունի անհրաժեշտ խոսքի՝ բարի խորհրդի, ազնիվ զգացումի, արդար գնահատման, քաջալերության, կարիքն ունի հույսի, հավատի, առ Աստված ապավինության, որպեսզի ընթանա դեպի ապահով, խաղաղ, երջանիկ ապագա։

Մեր ժամանակներում, երբ աշխարհում տարատեսակ համահարթեցման գործընթացների հետեւանքով խեղաթյուրվում են արժեքները, նահանջ ապրում հոգեւորն ու ազգայինը, առավել կարեւորվում է նաեւ գրականության դերն ու առաքելությունը՝ որպես մարդկային բարձր արժեքներ կրթելու, աշխարհայացք եւ ինքնություն ձեւավորելու միջոց։ Հայ գրականությունը կոչված է նաեւ ազգային միասնության ամրապնդմանը։

Այս առումով չափազանց մեծ նշանակություն ունի սփյուռքի եւ սփյուռքահայ գրողների հետ համագործակցությունը, սփյուռքահայությանը հուզող խնդիրների արտացոլումը արդի գրականության մեջ։

Անգնահատելի է Գրողների միության դերը՝ համախմբելու գրական մշակներին, անդրադառնալու ազգային գրականության զարգացման հեռանկարներին, ճշմարիտ գնահատականը տալու ժամանակի բերած հարցերին, խրախուսելու գրական ասպարեզում առաջին քայլերը կատարողներին։ Այսօր, սիրելինե՛ր, ձերն է պատասխանատվությունը՝ միության տասնամյակների ավանդներին հավատարիմ՝ մեր գրականությունն ու մշակույթը հարազատ պահելու իր ճշմարիտ նպատակին, հարստացնելու արժեքավոր գրական գործերով, որպեսզի դրանք շարունակեն ուղենիշ լինել մեր հայրենիքի եւ ազգային կյանքի զորացման մարտահրավերներում։

Այս ուրախալի առիթով Հայրապետական Մեր գնահատանքն ենք բերում Գրողների միության նախագահին, վարչությանը, միության անդամներին ՝ իրենց ներդրած ջանքերի, հայ գրականության մեջ բարի ավանդի համար։ Աղոթքով ենք հիշում միության հանգուցյալ մեծանուն անդամներին եւ մեր ժողովրդին մատուցած նրանց նվիրյալ ծառայությունը։ Գրական ասպարեզի բոլոր նվիրյալներիդ մաղթում ենք ստեղծագործական նոր ներշնչանքներ եւ ձեռքբերումներ՝ ի շահ մեր մշակույթի եւ ազգային կյանքի զորացման ու հարստացման։

Հայցում ենք Երկնավորից, որ Աստծո ամենախնամ Սուրբ Աջի պահպանության եւ օրհնության ներքո ծաղկեն ու բարգավաճեն հայրենի մեր երկիրն ու բարեսեր ժողովուրդը։

Շնորհ, սէր եւ ողորմութիւն Աստուծոյ եղիցին ընդ ձեզ եւ ընդ ամենեսեան, այսօր եւ միշտ. ամէն։

Օրհնությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Բ.
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ